ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 164 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել 20-ը դեկտեմբերի 2023թ. թիվ 12 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին,

3.Եղեգիս համայնքի 2024թ. տարեկան բյուջեի նախագծի քննարկման մասին,

4.Ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,

5.Եղեգիս համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին,

6.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին:

7.25-ը հունվարի 2023 թվականի «Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,

8.Քաղաքացի Աղասի Ղուկասի Խանոյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

9.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ՝ 7	Դեմ՝ 2	Ձեռնպահ՝ 0
Ստեփանյան Արթուր	Բաբայան Վահե	
Մարտիրոսյան Նարեկ	Սմբատյան Մամիկոն	

Կողմ՝ 7 Դեմ՝ 2 Ձեռնպահ՝ 0

Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա ***բացակա***
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 165 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-14-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 7 Դեմ՝ 2 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա *բացակա*
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա *բացակա*
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն *բացակա*
Սմբատյան Արսեն *բացակա*
Միքայելյան Քրիստինա *բացակա*
Ստեփանյան Սաշա *բացակա*
Բաբայան Վահե
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 165Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1)հիմնական շենքերի և շինությունների համար

ա.մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում ՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

2)Սույն կետի 1) ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար հաշվի առնելով, որ Եղեգիս համայնքում ընդգրկված գյուղերի գոտիականությանը համապատասխանող գործակիցը 1.0 է (գյուղերը գտնվում են 17-20 գոտում)՝

ա.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

բ.501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,

գ.1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,

դ.3001-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3)ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա.մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ,

բ.20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման,

ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:

2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույլցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրեսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

4.Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

5.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

6.Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

7.Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով

սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1200 (մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ՝ 10100 (տաս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ շինությունների դեպքում՝ 13100 (տասներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 (քսան հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

ե.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 (քսանհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

զ.500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 (քառասունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

2)ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1200 (մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100 (տաս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 (տասներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 (քսան հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

ե.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 (քսանհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

զ.500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 (քառասունհինգ հազար մեկ հարյուր) դրամ,

8.Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

9.Համայնքի վարչական տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ.

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

3)այլ արտաքին գովազդի 1500 դրամ. համար՝

4)դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

10.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,
3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,
4) խաղատների համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,
5) շահումով խաղերի համար՝ 200 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,
6) վիճակախաղերի համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

11.Համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով

գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային *տարվա համար՝ 100000 (մեկ հարյուր* հազար) ՀՀ դրամ:

12.Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:

13.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

14.Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1)3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1 250 000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

2)5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

3)7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

4)10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 (հինգ միլոն միլիոն) ՀՀ դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1.Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու դիմաց փոխհատուցման վճար 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

3.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

4.Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց

փոխհատուցման վճար 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

5.Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

6.Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար մասնակիցներից վճար՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:

7.Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 3000 դրամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ:

9.Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ, կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

1)ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ, կամ

2)ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) ՀՀ դրամ:

3)Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

4)Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար 50(հիսուն) ՀՀ դրամ:

5)Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 30(երեսուն) ՀՀ դրամ:

6)Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) ՀՀ Հայաստանի Հանրապետության դրամ.

7)Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և

շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 10 (տաս) ՀՀ դրամ:

8)Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 (դրամ) ՀՀ դրամ:

9)Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել մեկ ամսվա համար 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ:

10)Շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:

11)Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) ՀՀ դրամ:

10.Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ
2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ
3) մեկ շաբաթվա համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ
4) մեկ ամսվա համար՝ 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ
5) մեկ տարվա համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

Ընդ որում՝ մեկ ժամվա համար սահմանված վճարի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար րոպեների հաշվարկման մեթոդ:

11.Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ:

12.Խմելու ջրի վարձավճարի չափը սահմանել ամսական 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ՝ մեկ շնչի հաշվով:

13.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական տարածքում գտնվող համայնքային արոտներից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

14.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական տարածքում գտնվող համայնքային խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

15.Համայնքի անասնաբույժի կողմից մատուցվող անասնաբուժական ծառայությունների վճար սահմանվում է՝
Ծննդօգնություն

1)Թեթև միջամտություն՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ,

2)Ծանր միջամտություն 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

16.Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»ը՝ պետական ծրագրում ընդգրկված Հակաանասնահամաճարակային միջոցառումներ)՝

1)Մանր կենդանի 50 (հիսուն) ՀՀ դրամ,

2)Խոշոր կենդանի 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ:

17.Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 500 (հինգ հարյուր) դրամ:

18.Ախտահանություն՝ 1 քառ. մետր 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

19.Միջատազերծում (դեզինֆեկցիա)՝ 1 քառ. մետր 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

20.Կրծողների դեմ պայքար (դեռատիզացիա)՝ 1 քառ. մետր 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ:

21.Արհեստական սերմնավորում խոշոր եղջերավոր, խոզեր՝ 6000 (վեց հազար) ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 166 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Եղեգիս համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի նախագիծը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 8	Դեմ՝ 2	Ձեռնպահ՝ 0
Ստեփանյան Արթուր	Բաբայան Վահե	
Մարտիրոսյան Նարեկ	Սմբատյան Մամիկոն	
Մարտիրոսյան Զոյա		
Հակոբյան Արտուշ		
Պողոսյան Հրաչյա ***բացակա***		
Մանուկյան Սաթինե		
Նազարյան Արգիշտի		
Ղահրամանյան Վարդան		
Գաբրիելյան Ահարոն		
Հարությունյան Կարեն ***բացակա***		
Սմբատյան Արսեն ***բացակա***		
Միքայելյան Քրիստինա ***բացակա***		
Ստեփանյան Սաշա ***բացակա***		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 20 -ի թիվ 166 Ա որոշման

Համայնքի բյուջեի եկամտային մաս. 337 166.5 հազ. դրամ
Հատված 1 337 166.5 հազ. դրամ որից՝
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար 1800.0 հազ. դրամ,
Անշարժ գույքի հարկ 8200.0 հազ. դրամ,
Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 29 000.0 հազ. դրամ,
Գույքահարկ շենքերից և շինություններից՝ 200.0 հազ. դրամ,
Տեղական տուրքեր՝ 1000.0 հազ. դրամ,
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 262 566.5 հազ. դրամ,
Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 7300.0 հազ. դրամ
Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 5600.0 հազ. դրամ,
Տեղական վճարներ՝ 13500 .0 հազ. դրամ,
Այլ Եկամուտներ(ՀՈԱԿ-ից ստացող)՝ 8000.0 հազ.դրամ,

Համայնքի բյուջեի ծախսային մաս՝ 337166,5 հազ. դրամ/Հատված 2/

01.1.1- օրենսդիր եւ գործադիր մարմինների պետական կառավարում՝ 180290,0 հազար դրամ, /Հատված 2/ այդ թվում՝

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111-130 000.0 հազ. դրամ
պարգևատրումներ և դրամական խրախուսումներ	4112-5000.0հազ. դրամ
Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211 -100.0 հազ. դրամ
Էներգետիկ ծառայություններ	4212-5000.0 հազ. դրամ,
Կապի ծառայություններ	4214-2000.0 հազ. դրամ,
Ապահովագրական ծախսեր	4215-800.0 հազ. դրամ,
Ներքին գործուղումներ	4221-500.0 հազ. դրամ,
Համակարգչային ծառայություններ	4232 -800.0 հազ. դրամ,
Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233-500.0 հազ.դրամ
Տեղակատվական ծառայություններ	4234-500.0 հազ. դրամ,
կառավարչական ծառայություններ	4235-900.0 հազ. դրամ,
Ներկայացուցչական ծախսեր	4237-200.0 դրամ.դրամ
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239 – 500.0 հազ. դրամ,
Մասնագիտական ծառայություններ	4241- 900.0 հազ. դրամ,
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251-980.0 հազ. դրամ,
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252-980.0 հազ. դրամ,
Գրասենյակային նյութեր և հագուստ	4261-990.0 հազ. դրամ,
Տրանսպորտային նյութեր	4264-2000.0 հազ.դրամ,
Առողջապահական և լաբորասոր նյութեր	4266-200.0 հազ.դրամ,
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267-950.0 հազ. դրամ,
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269-990.0 հազ. դրամ,
Պարտադիր վճարներ	4823- 1000.0 հազ.դրամ,
Շենքերի և շինությունների շինարարություն	5112-1000.0 հազ.դրամ,

Տրանսպորտային սարքավորումներ 5121-16000.0 հազ.դրամ,
Վարչական սարքավորումներ 5122-4000.0 հազ. դրամ,
Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր 5133-500.0 հազ. Դրամ,
Նախագծահետազոտական ծախսեր 5134-500.0 հազ. դրամ,
Հող 5411-2500.0 հազ.դրամ,

01.3.3- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 1500.0 հազ. դրամ /Հատված 2/
Համակարգչային ծառայություններ 4232-1500.0 հազ. դրամ,

01.6.1- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ -20890,0 հազ.դ/Հատված 2/
ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 -1000.0 հազ.դրամ,
Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-15000.0 հազ.դրամ,
վարչական սարքավորումներ 5122-990.0հազ դրամ,
Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657-1500.0 հազ. դրամ,
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-1500.0 հազ .դրամ
Հատուկ նպատակային նյութեր 4269-900 հազ. դրամ

02.2.1 Քաղաքացիական պաշտպանություն-1600.0 հազ. դրամ,
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 – 200.0 հազ. դրամ,
Տրանսպորտային նյութեր 4264-200.0 հազ. դրամ,
Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-200.0 հազ. դրամ,
Այլ մեքենաներ և սարքավորումներ 5129-1000.0 հազ. դրամ,

04.2.1- Գյուղատնտեսություն-14000.0 հազ. դրամ /Հատված 2/
Մասնագիտական ծառայություններ 4241 –500.0 հազ. դրամ,
Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-500.0 հազ. դրամ,
Այլ կապիտալ դրամաշնորհներ- 4657-5000.0 հազ. դրամ,
Շենքերի և շինությունների շինարարություն 5112-7000,0 հազ.դրամ
նախագծահետազոտական ծախսեր 5134-1000,0 հազ.դրամ

04.2.4 -Ոռոգում –28950.0 հազ. դրամ /Հատված 2/
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-1000.0 հազ. դրամ,
Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-950.0 հազ. դրամ,
Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-1000.0 հազ.դրամ,
Շենքերի և շինությունների շինարարություն 5112- 22 000.0 հազ. դրամ,
նախագծահետազոտական ծախսեր 5134- 4000.0 հազ դրամ,

04.5.1- Ճանապարհային տրանսպորտ -8800.0 հազ. դրամ/Հատված 2/
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 – 900.0 հազ. դրամ,
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-900.0 հազ.դրամ
Տրանսպորտային նյութեր 4264-2000.0 հազ. դրամ,
Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-500.0 հազ. դրամ,
Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-4500.0 հազ.դրամ,

05.1.1- Աղբահանում – 13200.0 հազ.դրամ, /Հատված 2/
Կոմունալ ծառայություններ 4213 -13200.0հազ. դրամ,

05.6.1. -Շրջակա միջավայրի պաշտպանություն 500.0 հազ.դրամ/Հատված 2/
Մասնագիտական ծառայություններ 4241-500.0 հազ.դրամ,

06.3.1 -Ջրամատակարարում – 25740.0 հազ. դրամ /Հատված 2/
ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239-300 .0 հազ.դր
Մասնագիտական ծառայություններ 4241-980.0 հազ. դրամ,
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-980.0 հազ.դրամ
Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-980.0 հազ.դրամ,
Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) 4512-500.0 հազ.դրամ,
Շենքերի և շինությունների շինարարություն 5112- 20 000.0հազ. դրամ,
նախագծահետազոտական ծախսեր - 5134-2000.0 հազ. դրամ,

06.4.1- Փողոցների լուսավորում-24860.0 հազ. դրամ/Հատված 2/
էներգետիկ ծառայություններ 4212-10000.0 հազ. դրամ,
ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239-980 .0 հազ.դրամ,
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-980.0 հազ.դրամ,
Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-900.0 հազ. դրամ,
Շենքերի և շինությունների շինարարություն 5112-10000.0 հազ. -
նախագծահետազոտական ծախսեր -5134-2000.0 հազ. դրամ,

08.2.4 -Այլ մշակութային կազմակերպություններ-7200.0 հազ.դրամ /Հատված2/
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 -800 0 հազ. դրամ,
Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-900.0 հազ. դրամ,
Հատուկ նպատակային այլ նյութեր 4269– 1500.0 հազ. դրամ,
Այլ ընթացիկ դրամաշնորհներ 4639- 1000.0 հազ. դրամ,
Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657-3000.0 հազ.դրամ,

10.4.1- Ընտանիքի անդամներ և զավակներ 3000.0 հազ. դրամ/Հատված 2/
Այլ նպաստներ 4729-3000.0.դրամ,

10.7.1- սոցիալական հատուկ արտոնություններ/այլ դասերին չպատկանող/ - 3500.0 հազ. դրամ/Հատված 2/
Այլ նպաստներ բյուջեից 4729-3000.0 հազ. դրամ,
Հուղարկավորության նպաստներ բյուջեից 4726-500.0

11.1.2 -Համայնքների պահուստային ֆոնդ 3136.5 հազ.**դրամ,**
Պահուստային միջոցներ 4891—3136.5 հազ. դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 167 Ա

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022թ. թիվ 136Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն ստորև ներկայացված Եղեգիս համայնքի բնակչին ֆինանսական օգնություն տրամադրելուն՝ Հովսեփյան Հերմինե Արայի, գ. Արտաբույնք՝ նորածին երեխայի խնամքի համար 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ՝ 10 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա ***բացակա***
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***
Բաբայան Վահե
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 168 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի փետրվարի 19-ին, ժամը 15:00-ին:

Կողմ՝ 8	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 2
Ստեփանյան Արթուր		Բաբայան Վահե
Մարտիրոսյան Նարեկ		Սմբատյան Մամիկոն
Մարտիրոսյան Զոյա		
Հակոբյան Արտուշ		
Պողոսյան Հրաչյա *բացակա*		
Մանուկյան Սաթինե		
Նազարյան Արգիշտի		
Ղահրամանյան Վարդան		
Գաբրիելյան Ահարոն		
Հարությունյան Կարեն *բացակա*		
Սմբատյան Արսեն *բացակա*		
Միքայելյան Քրիստինա *բացակա*		
Ստեփանյան Սաշա *բացակա*		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 169 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝ կադաստրային ծածկագիր՝ 10-029-0125-0012 , մակերեսը՝ 0,73 հա:

2.Մեկնարկային գին սահմանել 20000 (քսան հազար) ՀՀ դրամի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ՝ 8 Դեմ՝ 2 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա *բացակա*
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն *բացակա*
Սմբատյան Արսեն *բացակա*
Միքայելյան Քրիստինա *բացակա*
Ստեփանյան Սաշա *բացակա*

Բաբայան Վահե
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 170 Ն

25-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 02Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Եղեգիս համայնքի 25 հունվարի 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը.

1)Պակասեցնել՝

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 03 դաս 01 ծրագիր 60՝ ջրամատակարարում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-սուբսիդիաներ ֆինանսական պետական «համայնքային» կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացված) հոդվածից 490 000 (չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ,

2)համապատասխանաբար ավելացնել

ա.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 05 դաս 01 ծրագիր 52՝ ճանապարհային տրանսպորտ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) հոդվածին՝ 490 000 (չոր հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

3)Պակասեցնել

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 07 խումբ 01 դաս 01 ծրագիր 51՝ առողջապահական սարքավորումներ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4639-ընթացիկ դրամաշնորհներ հոդվածից 980 000 (ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ,

4)ավելացնել

ա.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 05 խումբ 01 դաս 01 ծրագիր 51՝ աղբահանություն և սանիտարական մաքրում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4213-կոմունալ ծառայություններ հոդվածին՝ 980 000 (ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 2

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա ***բացակա***
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

Բաբայան Վահե
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 171 Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ՂՈՒԿԱՍԻ ԽԱՆՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտեվորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ևփոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի 06/12/2023թ. N2/փ-449 դրական եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Աղասի Ղուկասի Խանոյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքը (0,28298հա մակերեսով, 10-035-0231-0079 կադաստրային ծածկագրով, 4-րդ խմբի հողամաս) փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման (բնակելի տուն կառուցելու համար):

Կողմ՝ 10 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա ***բացակա***

Կողմ՝ 10 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***
Բաբայան Վահե
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20-ը դեկտեմբերի 2023 թվականի N 172 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության 0.06078հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0800-) անտառ հողատեսքը փոխադրել ջրային նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը ջրային՝ ինքնակամ կառույցի (էներգետիկ օբյեկտ) օրինականացման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ 10 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ

Կողմ՝ 10 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա ***բացակա***
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Հարությունյան Կարեն ***բացակա***
Սմբատյան Արսեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***
Բաբայան Վահե
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**